

բորդին, նոյնչափ եւ — դեռ աւելի — մեր Արովեանին:

Արովեանի մանկավարժական գործունեութեան մասին միայն մի երկու տող ենք զբոսնում Հաքստհաուզէնի մօտ:

«Արովեանը (Երեւանում) տեսուչ էր նշանակուած նոր հիմնուած դպրոցի ու բնակուած էր մի արքունի (կառավարական) տան մէջ, ուր եւ օթեւան էի գտել ես» (I. 171):

Բողէնշտէդտ եւ ուրիշ ճամբորդներ բազմաթիւ անգամ անցելով մանրամասնութիւններ են հաղորդում այդ մասին, յատկապէս Արովեանի անհատական-մասնաւոր դպրոցի եւ նրա աշակերտների յառաջադիմութեան շուրջը:

Երեւանում Արովեան ինչպէս Հաքստհաուզէնի, (I. 177, 245), այնպէս եւ ուրիշ ճամբորդների համար կատարել է նաեւ Թարգմանի դեր:

Արովեանի սրտագին աջակցութիւնը Հաքստհաուզէնին եւ նրա գործին՝ չէ սահմանափակուել միայն տեղւոյն վրայ, անձամբ ցոյց տուած ծառայութիւններով: Ինչպէս Բոդենշտէդտ, այնպէս եւ Հաքստհաուզէն Գերմանիա՝ հայերնիք վերադառնալուց յետոյ եւս կապ են պահպանել Արովեանի հետ եւ գրաւոր նիւթեր ստացել նրանից, յատկապէս ժողովրդական բանահիւսութեան վերաբերեալ: Այդպիսի նիւթերից մէկի — «Ասլի եւ Քեարամ» ժողովրդական պատմութեան բովանդակութիւնը, այն ձեւով, ինչ ձեւով որ հաղորդած է եղել Արովեան, Հաքստհաուզէն առաջ է բերում իր գրքի մէջ (I. 315):

Հաքստհաուզէն Արովեանների գերդաստանից յիշում է նաեւ Խաչատուրի հօրեղբորը, (Յարութիւն) որը եւս իր կողմից որոշ տեղեկութիւններ եւ պատմութիւններ է հաղորդել նրան: Նրանք բոլորը միասին են այցելել նաեւ Եգիպտոսի բնակավայրը Հայաստանում, ուր եւ, տեղւոյն վրայ, Հաքստհաուզէն գիտել եւ ուսումնասիրել է այդ հետաքրքրական աղանդը: Արովեանները, ինչպէս նաեւ Հաքստհաուզէնին ուղեկցող Պիտեր Նէյ — Անդրկովկասի գերման գաղթականներից, եւրոպական մի քանի եւ Արեւելքի գրեթէ բոլոր լեզուներին հմուտ, լաւ հեթաթասաց, ծանօթ՝ Անդրկովկասի ու Արեւելքի ժողովուրդների

կեանքին, արհեստաւոր մարդ — բազմաթիւ տեղեկութիւններ են հաղորդել Հաքստհաուզէնին եղիպիների մասին: Եւ Հաքստհաուզէն իր գրքում մի ամբողջ հատուած է նուիրել այդ աղանդին:

Հայոց լեզուի մասին Արովեան հետեւեալ տեղեկութիւնները եւ կարծիքն է յայտնել Հաքստհաուզէնին (I. 295) .

«Ես չգիտեմ նոր լեզուներից եւ ոչ մէկը, գրում է Արովեան, որոնք այնչափ տարբերուելիս լինին իրենց հին, մայր-լեզուից, որոնցից նրանք ծագել են, որչափ նոր հայերէնը՝ հիմն հայերէնից: Ո՛չ լեհերէնն է այնչափ հեռու հին սլաւոներէնից, ոչ էլ իտալերէնը լատիներէնից, որչափ նոր հայերէնը՝ հին հայերէնից: Ով որ մեզ մօտ հին հայերէնը (գրաբար) սովորել է ուզում, ստիպուած է շատ աւելի դժուարութիւններ յաղթահարել, քան եւրոպացիները՝ իրենց հին, դասական լեզուները սովորելիս: Ես տասը տարեկան հասակիցս սկսած՝ մեծ եռանդով սովորել եմ այդ լեզուն, գրեթէ անգիր գիտեմ շատ գրքեր, ինչպէս եւ քերականութիւնը, շատ էլ գրել եմ (գրաբար), բայց եւ այնպէս չեմ կարող մէկի հետ ազատ խօսել (գրաբար լեզուով): Եւ ո՛չ մէկ լեզու այնչափ աշխատանք չէ պատճառել ինձ, որչափ՝ այդ լեզուն: (Արովեանը ազատօրէն խօսում էր վեց լեզուով, — փակագծի մէջ ասում է Հաքստհաուզէն): Դրա պատճառն էլ անտարակոյս այն է, որ այդ լեզուի բոլոր դադարաւորները, շարահիւսութիւնը, անգամ որոշ բաներ՝ բնա՛ւ չեն համապատասխանում նոր ժամանակների մտածելակերպին եւ արտայայտութեան եղանակին: Այդ լեզուն մաքուր է, վերին աստիճանի մշակուած եւ ճշկուն: Մարդ կարող է շատ հեշտութեամբ մինչեւ իսկ ամենադժուարին եւ վերացական գրութեանը նրանով վերարտադրել եւ Թարգմանել, բայց՝ ի՛նչ օգուտ դա մեր ժողովուրդին, քանի որ մինչեւ իսկ մեր հոգեւորականների մեծ մասը չէ կարող այդ լեզուով գրութեանը կարգաւ, ո՛ւր մնաց՝ հասկանալ: Բայց եւ այնպէ՛ս ամէն ոք մեղմում հպարտ է մեր հին լեզուով: Ոչ մի քահանայ թոյլ չի տալ իրեն՝ ռամիկ հայերէն լեզուով գրել, որովհետեւ այն համոզումը կայ թէ՛ դրանով նրա գրիչը կը պղծուի: Այն հոգեւորականը,